

ենք մեր վիճակէն. կը գտնուենք վրաններու տակ, իբր 5000 հոգիանոց բանակ մը կազմած ենք: Անգղիական կառավարութիւնը կը հոգայ մեր ուսուեստը, իսկ Եգիպտահայոց կողմէ զգեստ կը հոգացուի:

«... Օր մը մեր ծննդավայրը, որ այժմ դժոխք է, շնորհիւ Ֆրանսիայի, Ռուսիոյ, Անգլիայի և Իտալիայի հօգը և արդարասէր պետութիւնների դրախտի պիտի՞ վերածուի և մենք... կվերադառնանք հոն, կը վայելենք... արդեօք:

«... Մեր միջէն Քիպուսիյէ, զրեթէ ամբողջովին... Հաճի-Հապիպլիէն և Պիթիասէն փոքր մաս մը... յօժարացան գաղթելու հնազանդիլ... զրեթէ $\frac{1}{8}$ գաղթեցին... ագոնցմէ որ և է լուր մը չկայ: Թիւրքիոյ այժմեան դրութիւնն ի նկատի ունելով, անշուշտ, ոչ ևս են հիմա... իրենց մէջ կային Քէպուսիյէցի երկու երիտասարդ... քահանաներ...

«Հոս կը գտնուենք 5 քահանայ... Առաջնորդ Գերապատիւ... քանիցս մեզ այցելեց, յորդորեց և հայրական սիրով մխիթարեց զմեզ...»:—

* * *

Անցեալ ապրիլի 9-ին Փարիզում, Սորբոնի համալսարանի մեծ դահլիճում «Ֆրանսիական և օտարազգիների մերձեցման» ընկերութեան ջանքերով տեղի ունեցաւ մի մեծ հաւաքոյթ, ի պատիւ արիւնոտ և հիւժուող Հայաստանի: Ֆրանսիայի և Փարիզի լաւագոյն որդիները շտապել էին գալ և իրենց ներկայութեամբ յարգանքի ու հիացման նշան ցոյց տալ նահատակուած երկրի մահ գտած զաւակների յիշատակին և գթութեան խօսք լսեցնել տալ կորստից փրկուածների մնացորդների համար:

Ֆրանսիական բոլոր լրագիրները, առանց բացառութեան, տուին այդ մեծ ժողովի նկարագիրը, որ երևեցաւ Ֆրանսիական ազգի ոգու մեծութիւնը և իւր զաւակների բերանով արտայայտած ջերմ համակրութիւնը Հայութեան:

Ժողովի նախագահն էր պատգամաւորների խորհրդա-
րանի նախագահ Պօլ Դէշանէլ, ներկայ էին լուսաւորու-
թեան նախարար Պէնլըվէ, Ֆրանսիական գրականութեան
մեծ ներկայացուցիչը՝ Անատոլ Ֆրանս, Աբբա Վեդերլէ,
էլզասի ներկայացուցիչ—պատգամաւոր Ֆերդինանդ Բիշօն,
մարդկային իրաւանց համախմբակցութեան նախագահ Ժան
Ֆինօ, Revue լրագրի խմբագիր Անրի Կուլօն, գրագէտ
Ռօսնի, Էմիլ, Բուտրու Էլն, որոնք տեղ էին գրաւել պա-
տուակալ Խմբիոնի վերայ: Դանլիճի պատուաւոր հիւրի
շարքում երևում էին օտարազգի և հայ ներկայացուցիչ-
ներ, ինչպէս, զօրապետ Ռէնօ, Միացեալ Նահանգների,
Ճապոնիայի, Բրազիլիայի հասարակապետութեան, Սպա-
նիայի, Պորտուգալիայի, Սերբիայի ներկայացուցիչները,
Փրարքիլայի և Բելգիայի հայ հոգևորականութեան ներ-
կայացուցիչ Վռամշապուհ ա. քհյ. Քիպարեան,—Արջու-
ձենց, Ն. Սրբութեան լիազօր վսեմ. Պօղոս Նուբար—փաշա,
գրագէտ Արշակ Չոբանեան, Ռուս մամուլի ներկայացու-
ցիչ Նեմիրովիչ—Դանչենկօ, հայ գաղութի պատուակալ ան-
դամներից շատ շատերը:

Իսկ ամբողջ դանլիճը լիքն էր Ֆրանսիական և օտար
հասարակութեան ամենաընտիր երկսեռ ներկայացուցիչ-
ներով:

Հանդէսն սկսուեցաւ Մարսէլիօղով, որից յետոյ հան-
դէսի նախագահը, Պօլ Դէշանէլ խօսք առնելով իւր ամե-
նափայլուն ատենախօսութիւններից մէկն արտասանեց,
որ յաճախ ընդհատուում էր որոտընդոստ ծափերի տարափի
տակ: Պ. Դէշանէլն ասաց.

«Սորունկ հնութեան օրերին դեռ ևս ապրում էր մի ազգ,
որ աչքի էր ընկնում իրր մտաւոր ունակութեամբ, աշխատասի-
րութեամբ և բարձր քաղաքակրթութեան այն տուեալներով, որ
նորան յունա—լատինական Արեւելքի քաղաքակրթութեան ռանվի-
րայ և առաջապահ դարձրին: Այդ ազգը իւր քաղաքակրթութեան
ծաղկման աստիճանի երկար մի շրջանից յետոյ ընկճուեցաւ օս-
մանեան լծի տակ և այդ օրից սկսած նորա ազագայ գոյութիւնը
նահատակութեան մի անվերջ շարք է: Սպանութիւններ, հրդեհ-
ներ, կոտորած ու աւեր, բռնաբարութիւններ ու առևանգում,

աքսոր ու բռնի մահմեղականացում և այլ ևս հազար մի տեսակ տառապանք, — ահա այն երկար շղթան, որից կազմուած էր Հայի կեանքը Արևելքում դարեր շարունակ Օսմանեան լծի տակ։ Առաջին անգամ Եւրոպան Հայերի պաշտպանութեան խօսքն արտասանեց, 1878 թ. Բերլինի Վեհաժողովի ժամանակ, երբ Եւրոպական պետութիւնները հանդիսաւորապէս յայտնեցին, որ Հայաստանի անձեռնմխելիութիւնն ու անդորրութիւնն են ապահովում։ Սակայն վեհաժողովի որոշումը ոչ մի նշանակութիւն չունեցաւ թիւրքերի համար։ Այդ օրից Ֆրանսիան, Անգլիան, Իտալիան, Ռուսիան, Զուիցերիան և նոյն իսկ Ամերիկան մի անգամ չէ, որ ի լուր աշխարհի բողոքել են այն զարհուրելի վիճակի մասին, որ դեռ ևս գոյութիւն ունէր Հայաստանում, մինչև վերջին ժամանակներս։ Եւ աւելի զարհուրելին այն է, որ իւրաքանչիւր այդպիսի բողոքից յետոյ տաճկական վարչութիւնն առաւել ևս խստացնում էր իւր ոճիրները Հայերի նկատմամբ։ Հարց է առաջ գալիս, — ինչո՞ւ, ինչո՞ւ էր յառաջանում Հայկական այդ կանոնաւոր մշակոյթի վերածած կոտորածները։

«Պատասխանը պարզ է։— Գերմանիան, որ Բերլինի վեհաժողովի օրերից սկսած Արևելքում Տաճկաստանը ստրկացնելու հող էր պատրաստում, ամէն գնով պաշտպանութիւն էր ցոյց տալիս Օսմանեան Սուլթանին Հայերի հալածանքի գործում։ Եւ, յիշաւի, Հայերի ոչնչացումը Գերմանիայի շահն էր։ Հայաստանն, ինչպէս յայտնի է, մի լուրջ արգելք է, որ Գերմանական իդէերը Արևելքում բարեկաշտ պայմաններ գտնէին։ Եւ, ի դէմս Հայերի, մի լուրջ մրցակից գտնելով, որոնք արգելք էին դառնում նորա Հոմբուրգի մինչև Բաղդատ ձգուող տիրապետութեան ախորժակին, Գերմանիան, բնականաբար, լուռ համախոհ և գործակից դարձաւ Հայերի կոտորածների գործին։ Պէտք է ենթադրել, որ Տաճկական կառավարութեան՝ Հայերին իրենց հայրենիք Միջագետք աքսորելու և արտագաղթի դատապարտելու նշանաւոր հրամանը, որ հրատարակուեցաւ Դաշնակիցների զօրքերի Գալիպոլիի թերակղզին մտնելու հետեալ օրը. — կազմուած էր ոչ առանց Գերմանացիների անմիջական մասնակցութեան։ Գերմանիան է, թերևս, միակ պատասխանատուն այն բոլոր թշուառութիւնների, որ Հայերի գլխին եկան, որովհետև, ի նկատի առնելով բազմաթիւ փաստեր, նա էր գլխաւոր թելադրիչն ու ներշնչողն այն մի ամբողջ շարք ճնշող միջոցների, որ տաճիկ կառավարութիւնը ձեռք առաւ նոցա դէմ։ Իւր քաղաքական դաշնակցութեան շնորհիւ մօտ յարաբերութեան մէջ լինելով Տաճկաստանի հետ, Գերմանիան ոչ միայն չէր կանգնեցնում Տաճիկ կառավարութեան ձեռքը Հայաստանում քրիստոնեայ արիւն թափելուց, այլ նոյն իսկ չէր էլ բողոքում

դորա դէմ, որով և խախտեց Բերլինի դաշնագրութիւնը, որի տակ իւր իսկ ստորագրութիւնն ևս կար։ Գերմանիան այստեղ, մօտիկ Արևելքում, նոյն դաւաճան դերը կատարեց Հայերի նկատմամբ, ինչ որ Արևմուտքում կատարեց Բելգիացիների համար։ Թերևս, Գերման ցեղն դորա վերայ է հիմնում իսկ իւր մեծութիւնը։ Զպէտք է մոռանանք, որ Պրուսիան մեծացաւ և զօրեղ իշխանութիւն և պետութիւն դարձաւ ազգութիւնների ոչնչացնելու գնով։ Այսպէս, ամենքիս յայտնի է, որ Պրուսիան մի ամբողջ շարք բռնութիւններ է կատարել Լեհաստանի, Դանիայի, Էլզաս-Լոտարինգիայի ազգութիւնների նկատմամբ։ Այժմ Արևելքում է ձգտում կատարել նոյնը, յայտնքն բնաջինջ և անհետ անել Հայերին, Սլաւոնացիներին, չիբանանի ժողովրդին, Սերբերին, Հարաւային Սլաւոն մանր ազգութիւններին, չիլիատակելով այն, որ վաղուց, շատ վաղուց է իւր ջղուտ մատների մէջ պահում Զելսերին, Տրանսիլվանիայի Ռումանացիներին, Տրենտինի և Թրիեստի Իտալացիներին։

«Սակայն, չնայելով այս ամենին, մենք կանգնած ենք այն ճանապարհի վերայ, որ տանում է այն բոլոր ազգերի ազատագրութեան, որոնք Գերմանական ազահութեան և ընչաքաղցութեան զոհերն են դարձած։ Եւ մենք Հայաստանի վերայ ևս տեսնում ենք ազատագրութեան արշալոյսի ծագումը, որ աւելի ու աւելի վառ գոյներով է փողփողում՝ անվերջ աւերի ու արիւնաներկ դաշտերի սարսափի ու խաւարի վերայ։ Այստեղից, մեր հինաւուրց Սորբոնի, այս սրբազան բլրի, գիտութեան և գրականութեան Ակրոպոլիսի բարձունքից, որտեղից Ֆրանսիական միտքը արդէն հինգ դարու շրջանում իւր լուսովն է ցոլում ամբողջ աշխարհը, այս բարձունքից Ֆրանսիան երդւում է ազատագրել Քիզ, Հայաստան, ստրկութեան կապերից։ Եւ այն օրը, երբ Ռուսական երկգլխեան արծիւը ճախրեց Էրզրումի վերայ և երբ Հայ ժողովուրդը կտեսնէ Ստրասբուրգի և Մեցի տաճարների վերայ մեր զօշուկները փողփողելիս,—այդ օրը նա կարող է ասել, թէ ազատագրուած է, որովհետեւ Դաշնակիցների արևելեան և արևմտեան ճակատներում տարած յաղթութիւնը մի անգամ ընդ միշտ կապահովէ ճնշուած ազգութիւնների հաստատուն ազատութիւնը։ Այդ բոլէին Հայութիւնը իւր ծանր շղթաները կը թօթափէ և ազատ ազգերի շարքի մէջ կմտնէ»։

Լուսաւորութեան նախարար Պէնլլովէն արտասանեց հետևեալը.

«Երբ աւելի քան հինգ հարիւր տարի սորանից առաջ, Ասիական նուաճողներից ամենից աւելի արիւնոտւշոր՝ Լէնկ-Քէմուրը կանգնեցրեց Հայաստանի մարգարիտներից լաւագոյնի «հարիւր

հազար վարդաթփերի քաղաքի» Սուազի առաջ, քաղաքի բնակիչները, սարսափած և ահաբեկուած, մեծ աւերողի սիրտը մեղմելու համար նորա դէմն ուղարկեցին հազար մանկահասակ երեխայ, հազցրած ոտքից-գլուխ սպիտակ և ձեռքերին ծաղկեփնջեր:

Անհամբոյր աչքերի մի երկար հայեացք ձգեց ահաւոր Լէնկ-Թէմուրը մանուկների այդ անմեղ բանակի վերայ, որոնք ահ ու դողով ու աղերսանքով մօտենում էին բռնակալին... Եւ նա յանկարծ հրաման տուեց և մոնղոլական հեծեալների ձիերի սմբակների տակ ձեռքները վարդերով լի անմեղ մանուկների խմբերը ճմլուեցան:

Այս պատմութիւնը թողել են մեզ հնամենի տարեգիրները, մատնացոյց անելով դորա վերայ, իբրև մարդկային չարագործութեան ամենահրէշաւոր մի ոճիր: Եւ մենք չէինք կարողանում կարդալ այդ տողերը և չզգալ նորա մէջ մի դիւալան երազի, մի արիւնոտ մղձաւանջի տեսիլք: Սակայն այդ մղձաւանջն այսօր իրականութիւն է դարձած: Այն աւերն ու կոտորածը, որի մէջ մի տարուայ չափ լողում է արեան ծովի մէջ տարաբաղդ Հայաստանը, հաւասար են,—ի՛նչ եմ ասում, անցել են իրենց ահելի չափերով և իրենց անգթութեամբ բոլոր դարերի և ազգերի ամենից աւելի անգութ պատմուածքներից ու առասպելներից: Գերմանիան կարող է պարծիլ իւր գործով. նորա անգթութեան փառքը մթազնեց նոյն իսկ Լէնկ-Թէմուրի անգթութիւնները:

Երբ 1914 թ. օգոստոսին ողջ աշխարհը սարսափեց լսելով Բէլգիայի և Ֆրանսիայի սահմանակից քաղաքներում կատարուած արիւնալի ողբերգութեան շարքը,—այն հրդեհի ծովը, որի մէջ ամբողջ քաղաքներ էին լափւում, ամբողջ խմբերի հրացանի բռնելու դէպքերը, կողոպուտի ու բռնաբարութիւնների տեսարանները,—մարդկութիւնը ենթադրում էր, որ այդ ոճիրներից դէնն անցնելու այլ ևս սահման չկայ:

Որքան էլ աղիողորմ չլինէին այդ դէպքերը, սակայն, դժբաղդաբար, դա նախադուռն էր մի առաւել սարսափելի ողբերգի: Մեր թշնամիների կատաղութիւնն օր օրի վերայ առաւել ևս մեծ չափեր էր ընդունում, քանի նոքա աւելի ևս հեռանում էին յաղթութիւն վաստակելու յոյսերից և որչափ իրենց կատարած զաւաճութիւնների վայրագութիւնն արտօնում էր նոցա առաւել մեծ չափերով ստութեան և չքմեղութեան դիմակ առնել երեսներին:

Բելգիայում սպանուած կանայք և երեխաներ կարելի էր հաշուել հարիւրաւորներով, Սերբիայում—հազարաւորներով, և Հայաստանում—հարիւր հազարներով, ինչպէս Դանտէի Դժոխքի մէջ, այստեղ ևս սարսափի շրջանները հետզհետէ ընդլայնում, մեծանում են և ահուլի դառնում, որի մէջ պիտի մտնէ ապագայ

պատմագիրը, որպէսզի հետեւէ Գերմանիային իւր արիւնալի գործի արիւնաներկ ճանապարհի վերայ»:

Հայերի կոտորածները, ապացուցանում է ատենախօսը, միշտ էլ կատարուել են և գործադրուել որոշ կանխամտած ճշտութեամբ և ոճրագործի հետեւողականութեամբ: Ապա մի հակիրճ, սակայն ճշգրիտ մանրամասնութեամբ պատկերացնում է այն ոճիրները, մի ամբողջ ազգի տանջանքի սարսուռը, սպանութիւններն ու կոտորածը, որ ընդհանուր առմամբ մօտ մի միլիոն զոհ է տուել, — որից ամբողջ դահլիճը սոսկումի ցնցումով է ջղայնանում: Այդ վարպետօրէն գծած համապատկերը միաժամանակ և Գերմանական քաղաքականութեան պատկերն էր գծում Փոքր-Ասիայում: Գերմանիայի ոճրագործ դերն ապացուցանելով մի ամբողջ ազգի կանոնաւոր կազմակերպուած բնաջնջման գործի մէջ, Պէնլըվէն շարունակում է—«Այո, յիշաւի, Deutschland über alles արեան գետերի և նորա վտակների վերայ»:

«Թող մի ամբողջ խաղաղ քաղաքակրթութեան ձգտող ազգ բնաջինջ լինի, միայն թէ Բաղդադի երկաթուղային գիծը շահաւէտ մի ձեռնարկ դառնայ»:

Հայ ժողովուրդը կոնգնած էր Գերմանական շահերի ուղու վերայ, նա պէտք է անհետ կորչէ:

Սակայն որչափ էլ անգութ և ուժեղ էր այդ ահռելի հարուածը, սակայն Հայ ժողովուրդը չի ընկճուիլ դորա տակ:

Մենք առ այժմ խօսեցինք այդ ազգի տանջանքների, նորա աննկուն ընդդիմադրութեան մասին, որ ընկճել չէ կարող ոչ մի արհաւիրք:

Ի՞նչու ջանացին դահիճներն. — չբաւականանալով միայն տանջանքներ հասցնելով, այլ և ստորացնել այդ ազգը: Ի՞նչու, որովհետև այդ ազգը իրեն արժանի ցոյց տուեց իւր նախնիքներին: Սակայն ինչ ընդդիմադրութիւն կարող էր ցոյց տալ խաղաղ երկրագործը կանոնաւոր զօրքի թնդանօթների, աւազակախմբերի օրերի և հրացանների դէմ, քանի որ նորա ձեռքին նոյն իսկ դաշակ չէին թողել պաշտպանուելու: Նոքա կարող են մաքառել և պայքարել միմիայն իրենց անյողողող ոգով և յարատեւութեամբ: Շատ քիչ են այն դէպքերը, որ նոցանից մէկն ու մէկը կեանքի փրկութեան գնով իսլամ է ընդունել: Բայց թող փորձեն այդ դժբաղդ նահատակների ձեռքը դէնք տալ և նոքա մի—մի աներկիւզ զինուոր կդառնան: Երբ նոցա ձեռքին մի քանի հրացան կար, նոքա ընդդիմադրել գիտցան տաճիկ կանոնաւոր զօրքի դէմ: Զէքէլ—Սուէդում, մինչև որ բոլոր ռազմիկ պաշարը հատաւ: Նոքա անողոք կորստի պիտի մատնուէին, եթէ Ծրանսիական ազատարար նաւը չհասնէր ժամանակին և չփրկէր նոցա: Նոցանից շատ

շատերն են կուռում Ռուս զօրքերի շարքերում, իսկ միւսները մեր զօրաբանակներում:

Ձոհերի արիւնը հերոսներ է ծնում:

Դա է այն բարձրագոյն յոյսը, որ արտացոլում է հայ բանաստեղծ՝ Արշակ Չոբանեանի «Որբեր»-ի մէջ, որի տաղանդը նոյնչափ բարձր է, որչափ իւր Հայրենասիրութիւնը, մէկն այն անհատներից, որ այս հաւաքոյթը կազմակերպելու ոգին ներշնչեց և որ այժմ մեր մէջ է գտնւում:

«Ա՛, իմ մայր Հայրենիք,—բացականչում է բանաստեղծը,—այնտեղ ուր մի ժամանակ խաղողի թփերի մէջ ընդ մէջ գոռոզ բարդին էր դէպի վեր սլանում և վարդի թփերը բուրում, աւանդ, այժմ միայն քո վերջին ծառերն են մնացած և քո վերջին ծաղիկները,—քո որբուկները»:

Բայց այդ դժգոյն ծաղիկները (օ, չափազանց դժգոյն, որովհետեւ նոցա հայրերի արիւնը գետի պէս հոսեց) այն անմեղութիւնն են պատկերացնում, որ տանջուել է անվերջ, որպէսզի ուրիշների քնած խիղճն արթնացնէ և որ նոր թափով ջերմացնէ այն մարտիկներին, որ չարիքի դէմ են պայքարում:

Այդ կոչին արդէն պատասխան է տալիս Ռուս ազատարար-զինուորի յաղթական գնացքը, այդ կոչին արձագանք են տալիս Վեօրդէնի թնդանօթները:

Այն ժամը, որ մենք ենք ապրում, ամենից աւելի վեհն է այն ժամերից, որ մարդկութիւնն ապրել է, սա այն գերագոյն դէպքն է, որ Նախախնամութիւնն ընձեռում է մեզ, որպէս զի բարբարոսների ձեռքից մի ամբողջ երկիր խլինք, ազատենք: Պէտք է գիտնանք, արդեօք հնարաւոր է երկրորդ անգամ տոկալ այն սարսափները, որ մենք կրեցինք մեր մոլորակի վերայ, Պէտք է գիտակցենք, թէ հնարաւոր է արդեօք, որ այդ սարսափներ գործողները վաղն իշխանաւորներ կդառնան, թէ անհետ կկորչին: Ուրիշ այլև այլութիւն չկայ: Ֆրանսիայի և նորա Դաշնակիցների ձեռքին է ապագայ քաղաքակրթութեան դրօշակը: Նոքա իրաւունք չունին ոչ անձնատուր լինելու և ոչ թուլանալու: Որքան էլ ծանր կլինին այն զոհաբերութիւնները, որ կրում ենք մենք, սակայն մենք կը կռուենք մինչև յաղթանակ վաստակելը, մինչև աշխարհը ազատագրելու ըրպէն:

Երկար ծափերով է վարձատրւում ատենախօսը և այդ ծափերի տարափի տակ բեմ է բարձրանում արքա Վեդերլէ, էլզաս-Լօրանի պատգամաւորը: Հ. Վեդերլէն ասում է.

«Բարեկամներիցս մէկը, տարիներ առաջ քան այս պատե-

դուժ մի համագումար հրաւիրել տանջուող ազգութիւնների ներկայացուցիչներից:

Եւ, դարմանալի երևոյթ,—այն ազգութիւններից, որոնք ցանկութիւն էին յայտնել իրենց ներկայացուցիչն ուղարկել Փարիզ, և ոչ մէկը չկար, որ Գերմանիայի զոհն եղած չլինի: Դանիացիք, Լեհերը, էլզասցիները, Լոթարինգացիները, Չեխերը, Ռուսիները, Սլովակները, Խրօթները, ամենքն ևս արտունջ ու պանգատ ունէին Գերմանիայի դէմ, այդ անազնիւ ժողովրդի դէմ, որ աշխատում էր իւր *kulture* փաթաթել այնպիսի ազգերի վզի, որոնք հազար անգամ աւելի քաղաքակրթուած են, քան ինքը: Բոլորովին հասկանալի է, որ այսպիսի պայմանների մէջ Գերմանիան կատարեալ համաձայնութեան էր եկած մի այլ բարբարոս ազգի հետ, որպիսին Տաճիկն է:

Քիչ առաջ պ. Դէշանէլը յիշեցրեց այստեղ, որ 1878 թուին Բեռլինում ստորագրուեցաւ Հայաստանի ազատագրութեան պատմական վաւերագիրը: Հետեալարար ամենից աւելի Գերմանիան էր շահագրգռուած, որպէս զի կենսունակութեան կոչուին այն բարենորոգումները, որ ստորագրուեցաւ իւր մայրաքաղաքում:

Եւ հետեանքն ի՞նչ եղաւ: 1895—96 թուերին մինչև 300,000 Հայ կոտորուեցաւ և երբ, Ֆրանսիան և Ռուսաստանը իրենց Կ. Պօլսի դեսպանների բերանով բողոքեցին, Վիլհելմ Բ. իւր Ստամբուլի ճանապարհորդութիւնը յանձն առաւ, որպէս զի իւր քրիստոնեայ Կայսերական ասիի մէջ սղմէր Հայերի հալածիչ, Արդիւլ-Համիդի բարեկամական ձեռքը:

Իսկ այժմ Գերմանիայի արքանեակները տիրում են Կ. Պօլսում և նոցա՝ Գերմանական *kulture*-այի ներկայացուցիչների պարտքն էր պաշտպանել Հայերի կեանքը: Պ. Պէնլըվէն շատ սուր բնորոշեց, թէ «տաճկական բարբարոսութեան միացաւ և գերմանական գործելու եղանակը»:

Իսկ մենք՝ էլզասցիներս, մենք շատ լսւ ծանօթ ենք այդ գերման եղանակին, որ անվերջ ձգտում է ոչնչացնել այն ազգութիւնները, որոնց քաղաքակրթութիւնը շատ աւելի վաղնջինի է, քան գերմանականը:

Ես երկար չեմ զբաղեցնի ձեր ուշադրութիւնը այն փայլուն ատենախօսութիւններից յետոյ, որ նոր լսելու հաճոյքն ունեցաք:

Ինձնից առաջ բեմ ելած երկու պերճախօս խօսքի վարպետները, Հայաստանի դաշտերի ամբողջ հունձը տարան, առանց ինձ բաժին թողնելու: Բայց ինձնից խնդրել են էլզաս-Լօրէնի ողջոյնները արտայայտեմ այստեղ Հայաստանին, որ և մատուցանում եմ ի բոլոր սրտէ:

Իմ բոլոր եղբայրակիցներս ևս, ինչպէս Հայերը, գերմանա-

կան բարբարոսութեան զոհերն են եղած: Մինք համարեա ազատագրուած ենք և սա՝ քաղաքակրթութեան և խաղաղութեան յաղթանակն է չարութեան և բարբարոսութեան դէմ: Հասել է այժմ վրիժառութեան ըոպէն, արդարադատութեան ժամը: Իսկ վաղուան օրը կրերէ մեզ ամենքիս համար սիրոյ, հղբայրակցութեան և ազատութեան ժամը:

Բեմ է ելնում Ֆրանսիայի գրական մեծ դէմքը, հայութեան անկեղծ լարեկամներէց մէկը, գրչի և խօսքի մեծ վարպետ Անատոլ Ֆրանս:

«Երբ քսան տարի սորանից առաջ, ասում է նա, Սուլթան Արդիւլ-Համիդի հրամանով Հայաստանը իւր ջարդուած որդիների արիւնով ողողուեցաւ, ամբողջ Եւրոպայում հազիւ մի քանի ձայն լսուեցան, որ բողոքեցին մի ամբողջ ազգ խեղդամահ անելու փորձի դէմ: Ֆրանսիայում, ընդդիմադիր կուսակցութեան պատկանող շատ սակաւաթիւ անձեր միացան՝ բողոքելու մարդկային իրաւունքների այդպիսի խախտման դէմ: Այդ անուններն ամենքիդ յայտնի են,—գոքա են ժան Ժօրէս, Դընի Կօշէն, Գաբրիէլ Սէյյալ, Վիկտոր Բէրար, Ֆրանսիս դը-Պրէսանսէ, Շարլդան, Պիէր Շույար, Ժօրժ Կլէմանսօ, Ալբեր Վանդալ և դարձեալ մի քանի անուններ, որ այս բոպէիս չեմ յիշում: Մնացածները մօռնջ մնացին: Շատերն զգացին խոր վշտակցութիւն և ցաւ դէպի այդ ազգը, բայց և այնպէս մեղքը դժբաղդ զոհերին վերադրեցին՝ նոցա չափազանց թուլութեան մէջ մեղադրելով: Ոմանք ևս պաշտպան կանգնեցին դահիճներին, ասելով, որ Տաճկաստանն արդարացի պատիժ է հատուցանում ապստամբներին: Ուրիշներն էլ այդ ջարդերի մէջ Անգլիայի և Ռուսիայի մատն էին տեսնում:

«Սակայն չնայելով հայասէրների բողոքներին և մի քանի պետութիւնների անհամարձակ դիմումներին, չնայելով նոյն իսկ Օսմանեան կառավարութեան հաւաստիացումներին, այնուամենայնիւ Հայերի դէմ հալածանքները և բռնութիւնները շարունակուած էին, թէև բաւական վարպետ սքօղուած:

«Ոչ մի հետեանքի չհասցրեց և տաճկական յիդափոխութիւնը, որով միայն վարչութեան կազմը փոխուեց: Երկտասարդ-թիւրքերը իշխանութեան հասնելով Արդիւլ Համիդից էլ անցան՝ Ազանայի ջարդերը կազմակերպելով: Ի վերջոյ քրիստոնեայ այդ ժողովրդի յաւիտենական տանջանքները բթացրին մեր գթասրտութեան զգացումները և Հայերը մէն միայնակ մնացին, մատնուած իրենց բաղդին, օտար և խորթ քաղաքակրթուած Եւրոպայի համար:

«Եւ այդ ժողովրդի մասին ոչինչ չգիտէինք, ոչ նորա անցեալի, ոչ նորա հանճարի և ոչ նորա յոյսերի և իղձերի և հաւա-

տալիքների մասին: Սկսուեցաւ մեծ պատերազմը: Տաճկաստանն
ևս մասնակցեց նորան, իբրև Գերմանիայի թեւակեալ, եւ Ֆրանսի-
սիան մի անգամից գիտակից եղաւ Հայաստանի տանջանքների
պատճառներին: Ֆրանսիան հասկացաւ, որ Տաճիկների և Հայերի
մէջ դարուոր, անհաւասար մաքառումը բռնակալի, բարբարոսի
պայքարն էր արդարութեան և ազատութեան դէմ: (Որոքընգոս եւ
բուռն ծափահարութիւններ): Եւ երբ մենք տեսանք Տաճկական
այդ ապարդիւ դոհը հաւատով ու յուսալից հայեացքը մեզ ուղ-
ղած, մենք հասկացանք, վերջապէս, որ մեր քոյրն է, որ մեռնում
է Արեւելքում, որ մեռնում է լոկ այն պատճառով, որովհետեւ նա
մեր քոյրն է: (Որոքալից ծափեր): Այն պատճառով, որ նա ոճիր
էր գործել՝ մեր զգացումներին մասնակից լինելով, սիրելով այն՝
ինչ որ մենք ենք սիրում, հաւատալով այն բանին, որին մենք
էինք հաւատում, և մեզ նման գիտութիւնը, բանաստեղծութիւնն
ու արուեստը որդեգրելով: Դորա մէջ էր նորա ոճիրը.... (բուռն
ծափահարութիւն ամէն կողմից, Ձայներ.— «Կեցցէ փոյ Ֆրանսիան,
Կեցցէ Սնատի Ֆրանսը»):

Ուստի և հասկանալի է, որ Ֆրանսիացիք պարտաւոր են ար-
տայայտել այդ ազգի առաջ, որ վեհագոյն և ազնուագոյն ցաւերն
ու տանջանքները երկնելու բոպէն է ապրում՝ իւր ամենամեծ
վշտակցութիւնը: Այստեղ, այս վայրկեանիս, մենք մեր պարտա-
ւորութիւններից ամենասուրբազանն ենք կատարում: Մենք յար-
գանք ենք մատուցանում Հայաստանին, ոչ միայն նորա կրած
յաւիտենական տանջանքների համար, այլ և այն անյողգողղ ա-
րութեան համար, որով կրել գիտէ նա այդ ամենը: Մենք օրհներգ
ենք արտասանում նորա աննկուն սիրոյն՝ առ մեր քաղաքակր-
թութիւնը: Որովհետեւ Հայաստանը հարազատ է մեզ և ինչպէս
ասել է մի Հայ հայրենասէր, նա Լատինական հանճարի յարաճուն
շարունակութիւնն է յառաջ տանում Արեւելքում: Նորա պատմու-
թիւնը, որ քիչ առաջ մեր առաջ պարզեց պ. Պօլ Դէշանիւն այն-
քան գլուխից կերպով, Յունաստանից և Հռոմից ժառանգած մտա-
ւորական գործերի պահպանութեան յարատեւ ձգտումն է: Կարող
ենք ասել, որ վերջին պահուն մեզ համար և մեր անունը, իրենց
շրթներից զոհուած աւելի քան հինգ հարիւր հազար Հայութիւնը:

«Այդ քրիստոնեաները,—ասում են թիւրքերը,—մի տհուելի
ապստամբութիւն էին երկնում և իրենց ձեռները կիսալուսնի
թշնամուն էին մեկնում»: Սակայն այդպիսի մեղադրականով մար-
դասպանները չեն կարող արդարացնել իրենց ոճիրը: Բայց, ճշ-
մարիտ է և այն, որ Հայերն իրենց հոգու խորքերում միշտ էլ
աղօթել են Ֆրանսիայի և նորա Դաշնակիցների յաղթութեան
համար: Եւ մեզ սիրող ու զնհատող այդ ազգի անէացման գործը

ընդհանրապէս, կանխորոշ վճիռ էր Տաճիկ կառավարութեան։ Սուլթանի հրամանով և Գերմանիայի բարեհաճ գործակցութեամբ բնաջինջ եղան բոլոր Հայերը՝ տղամարդ, կին, երեխաներ, Սամսոնից սկսած մինչև Տիգրանակերտ։

«Հայաստանը մահամերձ է, սակայն նա կը վերակենդանանայ։

«Եւ այն սակաւ արիւնն ևս, որ մնացել է նորա մէջ, այդ արիւնը թանգագին արիւն է, որից պիտի ծնունդ առնէ մի հերոսական սերունդ։ Այն ազգը, որ չէ կամենում մեռնել, երբէք չի մեռնիլ։

«Եւ զօրքերի յաղթական փառքից,—որոնք պայքարում են Արդարութեան և Ազատութեան համար,—Դաշնակիցների առաջ դրուած կլինին բազմաթիւ խնդիրներ։ Եւ այդ խնդիրներից ամենից սրբազան գործերը կլինին կեանքի վերակոչել նահատակ—ազգութիւններին՝ Բելգիան, Սերբիան և Հայաստանը։

«Խոնարհած դէպի այդ ազգերը, նոքա կասեն. «Ե՛լ, քոյր իմ։ Այլ ևս մի տանջուիլ։ Այս ըսպէիս դու ազատ ես ապրելու ըստ քո հանճարի և հաւատի»։

(Ամենքը տեղերից ելած, բոլորն ծափահարութեամբ զղրդեցնում են դահլիճը։ Զայներ. «Կեցցէ քոյր Քրտնսիւսան.—Կեցցէ Անատոլ Քրտնս».—Զօբանեանը և Անատոլ Ֆրանսը համբուրւում են.—Ուրիշներն ևս մօտենում են և համբուրւում Անատոլ Ֆրանսի հետ)։

* * *

Ընկերութեան քարտուղարը, պ. Շարօն, կարդում է այն հեռագիրները, որ Հայութեան և Հայաստանի բարեկամները իրենց յարգելի բացակայութիւնը կամեցել էին գրաւոր համակրութեամբ քաւել,—զոցա մէջ են Լօրդերի պալատի անդամների կողմից, Ջէյմս Բրայսից, Վալերիյ Բրիւսովից, Զուիցերական հայասէրների ներկայացուցիչ՝ Լէոպոլդ Ֆարլից, Թուրինում հրատարակւող Armenia լրագրի հրատարակիչ Կօրատօ Կօրագիւնոյից, Մոսկուայի հայերից ևն ևն)։

Լօրդերի պալատի նախագահից.

«Հայերին յարգանք ու մեծարանք ցոյց տալու առիթով «Ֆրանսիայի և Օտարազգիների մերձեցման» ընկե-

ընթացին ջանքերով կազմակերպուած հաւաքոյթի ժամին
կը կամենայի Աւագների պալատի անունից արտայայտել
նոցա խորին համակրութեան զգացումները արիական և
քաջ Հայ ժողովրդին, որ կրել է այնքան տանջանքներ:

Նախագահ Աւագների Պալատի:

Նախկին նախարար, դեսպան և աւագների պալատի
անդամ Լօրդ Զ. Բրայսը հեռագրում է.

«Ամենամեծ բաւականութեամբ ստացայ ձեր հրաւե-
րը, ներկայ լինելու Սորբոնի դահլիճում գումարուելիք
հանդիսին: Բաղդադը պիտի զգայի ինձ, եթէ կարողա-
նայի միանալ Փարիզի իմ բարեկամներին, որոնք պաշտ-
պանում են տառապող Հայաստանի ազատութիւնը, արդա-
րութիւնը, սակայն ընտրուած լինելով Անգլո-Ֆրանսական
խորհրդարանների միջ-խորհրդակցական Յանձնախմբի նա-
խագահ, ապրիլի 9-ին պիտի Լոնդոն գտնուէի, որպէս զի
կարողանայի Ֆրանսիայի ծերակոյտի և խորհրդարանի
անդամներին ընդունել:

Խնդրում եմ ձեր ընկերութեան խորհրդին անպատ-
ճառ արտայայտել հաւաքոյթի յաջողութեան համար տա-
ծած զգացումներս և ցաւս, որ անկարող եմ ձեզ հետ
լինել:

Լօրդ Բրայս:

Զուիցերիայի հայասէրների կողմից.

«Մենք, Զուիցերացիներս, քսան տարի անընդհատ
շփման և մօտ յարաբերութեան մէջ լինելով Հայերի հետ,
սիրեցինք նոցա, նոցա քաղաքականութեան պատմութեան
մէջ խաղացած դերի պատճառով, նոցա արութեան և դէպի
մայրենի հողն ունեցած սիրոյն և նոցա մտաւոր զարգաց-
ման համար, որ ամենազարհուրելի փորձութիւնների մէջ
ևս արտայայտուելով՝ այդ ազգի ոգին իւր հայրենի, դա-
ժան, վայրի գեղեցկութեամբ օժտուած լեռների բարձունքն
ու ձորերը:

Մինչև հոգու խորքը սրտողած և միաժամանակ խոր
վշտով համակուած, կամենում ենք մասնակից լինել հան-

րական ցոյցին և ձեզ հետ միասին արտայայտել մեր բողոքն ու ցասումը Հայերին բնաջնջելու և հալածելու համար:

Մեր յոյսերն ենք արտայայտում, թէ Ֆրանսիայի մաքուր ձայնը կբորբոքէ սրտմտութիւնը ամբողջ քաղաքակիրթ աշխարհի, որի սրբազան պարտքն է օգնել այդ նահատակ ազգին:

Լեոպոլդ Վաւ:

Armenia-ի հրատարակիչը, Թուրինից հեռագրում է.

Իմ Հայրենիքում ապրող այն բոլոր անձերի անունից, որոնք արտասուում են Հայաստանի դժբաղդութիւնների և թշուառութեան վերայ, ովքեր նորա համար Արդարութիւն են աղաղակում, կը կամենայի իմ ձայնն ևս միացնել Ֆրանսիայի ներկայացուցիչների ձայնին, որոնք ժողովուրդ են ի միասին ամբողջ մարդկութեան ուշադրութիւնը գրաւելու այդ հերոսական ժողովրդի վերայ:

Կօրադօ Կօրադեմօ:

Գեղարուեստագէտների մի փայլուն խումբ իրենց ներկայութեամբ, արտասանած բանաստեղծական կտորներով, երգով, նուագածութեամբ հանդէսին այն շուքը տուին, որ յատուկ է Ֆրանսիական ոգուն՝ թարմացնելով ունկնդիր հասարակութեան ուշադրութիւնը, բարձրացնելով նորա զգացումների աստիճանը, ի մի կապելով օտարն ու Ֆրանսիական հանճարը, այդտեղ էին դին Դէլնա, պն Միօիլիփան Comedie Francaise-ից, տն Վեբեր (Secoude), օր. Մայլ, Իփօնն Դիւկօզ, պր. դը-Մաքս, տկ. Ժաննա Մօն Ժօզէ, Մօրինօ, որոնք կարդացին, թարգմանաբար, կտորներ հայ բանաստեղծներից (Վարուժան, Զօբանեան, Թումանեան) և հայ ժողովրդական ստեղծագործութիւնից. հայ ջութակահար Ալէքսանեան մեծ հրճուանք պատճառեց իւր փանդիլօով (violoncel), տկ. Կարակեօզ Հայկական երգերով, խումբը երգեց մի քանի Հայկական երգեր, իսկ տիկ. Արմէն Օհանեան (Շերանդադէ) արտասանեց իւր մի ֆրանսերէն ոտանաւորը, որ մեծ հրճուանքով լսուե-

ցաւ, որի չափածոյ թարգմանութիւնն ենք տալիս ստորեւ.

Արտաքսուած էի, քշուած առաջին

իմ հայրենիքից և լայն աշխարհում

Թափառում էի, մի նոր Հայրենիք

Գտնելու յուսով:

Եւ եկայ հասայ ես մի այլ աշխարհ

Ուր միայն գարունն, աշունն էր իշխում,

Ուր մեր ամառուայ օրերը ջերմոտ

Եւ խիստ ձմեռուայ բուք, ցուրտն ու բորան

Հիւրեր են անկոչ: Խաղողի կանաչ

Վազերի միջին, ոսկի արևի

Շողերով ողղած արտ ու դաշտերում

Ես տեսայ այդ նոր աշխարհի առոյգ,

Կայտառ, ժպտադէմ մի նոր ժողովուրդ,

Հիւրերի առաջ դռները լայն բաց:

Եւ ես հարցրի:—

— Այս ի՞նչ երկիր է:

Եւ ինձ պատասխան տուին, — «Փրանսիան է»:

Մօտեցայ անծայր շարք քաղաքների

Յուշարձաններով, պալատներով լի,

Գոռ յաղթանակի յաղթ կամարներով.

Եւ դոցա կողքին հսկայ գմբէթներ

Վեհ տաճարների, որ դէպի երկինք

Յաւէտ սլացող տենչով կուգենար

Իւր Աստծուն գիտնալ:

Եւ ես հարցրի,

— Այս ի՞նչ երկիր է:

Եւ ինձ պատասխան տուին. — «Փրանսիան է»:

Եւ իմ քայլերս առաջ տանելով

Կանգ առայ ապշած՝ մի գետի ափի:

Որ ողջ կարմիր էր ներկուած: Աստուած իմ,

Դա մի մեծ գետ էր դեռ ջերմ արիւնի,

Որ հեռուից բոսոր կոհակներ զրկած,

Առաջ էր նետուում թանձր, սևամած:

Իսկ ես դեռ առաջ էի ընթանում:
 Առջևս պալ-պալ մուկ, սև ծուխ-մըխի
 Քուլաներ ամպոտ պատել էին ողջ
 Երեսն արևի: Մի տեղ մի քանիսն
 Մահուան գալուստըն էին ողջունում
 Ժըպիտն երեսին, մի այլ տեղ այլ խումբ
 Երգը շրթներին լրացնում էին
 Մեռեալների շարքն:
 Եւ ես հարցըրի անունը երկրի
 Այս ասպետական:
 Եւ ինձ պատասխան տուին—«Ֆրանսիան է»:
 Ես ծունկի եկայ և համբուրեցի
 Հողն այդ աշխարհի:
 — «Գըտայ, ասացի, հարազատ աշխարհս,
 Երկրորդ Հայրենիքս»:

Երիտասարդ բանաստեղծուհուն երկար ծափերից յետոյ վարձատրում են շքեղ ծաղկէփնջով. յուզուած հայուհին իւր ծաղկեփունջը դնում է հաւաքոյթի նախագահողի առաջ, դորանով արտայայտել կամենալով երախտապարտ Հայաստանի հիացումն ու յարգանքը բարձր քաղաքակրթեամբ և դէպի փոքր ազգութիւններն ունեցած ջերմ համակրութեան և հովանաւորութեան համար:—Այս նոր շնորհալի արտայայտութիւնը ամենքի հաւանութեան արժանացաւ:

Այդ օրը երգուեցաւ նաև Ֆրանսիացի մի ականաւոր բանաստեղծի հետեւեալ ոտանաւորը, նուիրուած Հայաստանին: Բանաստեղծը թագնուել էր Maurice Couyba կեղծանուն տակ, իսկ այդ ստեղծագործութիւնը երաժշտութեան էր վերածել O. Vargnes-ը:

ARMÉNIE

Qu'jadis fut l'Edeu
 Du genre humain
 Preuner jardin,

De nos aïeux
 Terre benis!
 O paradis!
 O mon pays!

A ton nom cher
Mon exur es, fier,
Ex pour l'effort,
Se bat plus fort.

Tout noble esprit
De toi d'eprit
O Patrie
Tout meurteriel

Tes fleurs bleus,
Miraculeus,
Vont fecondant
Ton sol ardent!

O ciel divin
L'arche o'enoint,
Sous ton baiser
Se reposer!

Noi pas Toi
Redevint roi,
O Patrie,
Tant ébrie!

Passe, l'hiver,
Le rameau vert
Sur l'Ararat
Ref leurira!

Rois géné reux
Tous nos héros
Ont respiré
Ton air aéré!

D'autre viendront
Qui maintiendront
Arménie,
Ton génie!

Nous les suivrons,

Nous défendrons

Avec fierté

Ta librté!

Փրանսիացի բանաստեղծի Հայաստանին նուիրած
օրհներգից յետոյ երգուեցաւ խմբի կողմից «Մեր Հայրե-
նիք»-ը:

* *
*

Հետեւեալ օրը ամբողջ Փրանսիական մամուլը, համա-
րեա, զբաղուեցաւ նախորդ երեկոյեան մեծ հանդիսի նկա-
րագրութեամբ, ընդարձակ և համակրական յօդուածներ
նուիրելով թէ Հայութեան և թէ հանդիսի կազմակերպող-
ներին և ատենախօսներին: Փրանսիական թերթերը առաջ
էին բերել *in extenso* խօսած ճառերը, շատ քիչ բան աւե-
լացնելով, որովհետեւ այդ ատենախօսութիւնները ամբողջ
Փրանսիան էր, որ արտասանել էր իւր լաւագոյն ներկա-
յացուցիչների բերնով:

Le Journal ի միջի այլոց ասում է.

«... Ֆրանսիացիների և օտարների մերձեցման ընկերակցութիւնը երէկ մի գեղեցիկ ցոյց կատարեց ի պատիւ Հայաստանի, այդ բնութեան օրհնութեան արժանացած երկրի համար, սակայն որի իրաւատէր ընտրեալ ազգը, ճնշուած Տաճկաստանի լծի տակ իւր ոգեվարքն է ապրում»:

Figaro լրագիրը ասում է.

«... Ֆրանսիայի աւանաւոր մտաւորականներն եկել էին իրենց համակրութիւնն արտայայտելու այդ բազմատանջ ժողովրդին... և երբ հանդիսի վերջը, երիտասարդ հայ բանաստեղծուհին,— որի ընտանիքն ամբողջապէս մի քանի տարի առաջ սրի է անցած,— հանդիսականների կողմից նոր իրեն մատուցած ծաղկէփունջը Պօլ Դէշանէլի առաջ դրեց, մի կենդանի արտայայտիչ նշան դարձաւ Հայաստանի, որ իւր շնորհակալիքն էր արտայայտում Ֆրանսիային...»:

Rappel-ը հռետորների խօսքն առաջ բերելուց առաջ ասում է.

«Այժմենից ասենք, որ հանդէսը մեծ յաջողութիւն ունեցաւ և որ հանդիսականները արտաքոյ կարգի մի բարեպաւտեհ առիթ էին գտնում լսելու մեր ամենից աւանաւոր հռետորներին... Այդտեղ էին ժողովուած մեր ազգի ամբողջ հանճարի ներկայացուցիչները, որոնք դարաւոր աւանդական գեղեցիկ սովորութեան համաձայն՝ հանդէս եկան ի պաշտպանութիւն ճշմարտութեան և ազատութեան համար մաքառող Արդարութեան: Այդ ազգային հանճարն արդեօք չարտացոլեց ի դէմս Պօլ Դէշանէլի, Պէնլըվէի, արբայ Վետերլիի և Անատօլ Ֆրանսի... Պօլ Դէշանէլն, ըստ ամենայնի, արժանի էր իրեն, այսինքն, յիրաւի վեհապանծ էր այդ օրը: Ի պատիւ Հայաստանի և նորա քոյր Էլզաս-Լորանի, արտասանած իւր ճառը բազմիցս ընդհատեցաւ երկար ծափահարութիւններով: Տաճիկների և Գերմանացիների ոճիրները պարզ, վառ և անջինջ գոյնեղով խտացան նորա լեզուի տակ: Ինչ վերաբերում է ձեռն ապա դա մի նոր էջ էր, որ իւր յատակութեամբ, ազնւութեամբ և վեհութեամբ՝ Կիկերոնի, Դեմոսթինէսի լաւագոյն էջերն էին յիշեցնում...»:

Նոյն Rappel-ը Պէնլըվէի մասին շարունակում է.

«... Այդպիսի մի մեծ գիտնականի ներկայութիւնը հանդիսին համակրական մի նոր արտայայտութիւն էր Հայաստանին՝

ամբողջ Ֆրանսիական մտքի և մտածողների, ամբողջ համալսարանի կաճառի կողմից: Պէնլըվէի յուզիչ խօսքը դեռ ևս երկար կապրէ իւր ունկնդիրների սրտում:

«Մենք չէինք կամենայ տալ այն մեծ բանաստեղծի անունը, ասում է յօդուածագիրը, որ ծածկուել է Մորիս Բուկէյ անունան տակ, իւր «Հայաստանի Օրհներգ»ը տալով, որի համար Հայաստանի տանջանքները իւր լաւագոյն երկերից մէկի ծնունդը երկնեցին, սակայն թող մեզ ներուի գլուխ խոնարհել մեծ բանաստեղծի առաջ, որի ստեղծագործութիւնը մարտիկների սիրտը ոգևորութեամբ է լցնում»:

Le Temps-ը մի ընդարձակ առաջնորդող է նուիրում Հայաստանին «Ֆրանսիան և Հայաստանը» վերտառութեամբ.

«Շնորհիւ Գերմանիայի ամբողջ Եւրոպայում բռնկուած պատերազմն աւելի զգալի և կործանիչ եղաւ մանր ազգութիւնների համար, որոնք կանգնած են գերմանացիների ճանապարհի վերայ: Սակայն Հայաստանի վիճակն, իւր դաժան բաղդով, գերազանցեց միւս բոլոր ազգութիւններին: Այդ երկիրն աւերուեցաւ ոչ թէ թշնամու, այլ իւր իսկ տիրապետողի՝ թիւրքերի ձեռքով, որոնք կազմակերպել էին կանխամտածուած, կանոնաւոր բնաջնջումն մի ամբողջ ժողովրդի:

«Ահա այդ ապարադդ ժողովրդին է, որ այսօր Ֆրանսիան իւր համակրութիւնն է յայտնում: Համակրական այդ արտայայտութիւնը լոկ խորին վշտակցութեան արտայայտութիւն չի լինի, որ Հայաստանի նահատակութիւնն ազգում է Ֆրանսիայի սրտի վերայ: Այդ համակրութեան արտայայտութիւնները նախագուշակ նշաններ են նմանապէս այդ ազգի վերածնութեան, Տաճկական լծից ազատագրուելու ապագայի: Հնամենի բարեկամութեան կապերն են, որ զօդում են Ֆրանսիան հեռաւոր Հայաստանի հետ, որի թագաւորներից մէկը մի Ֆրանսիացի էր, Լուսինեան տնից: Հայ ժողովուրդը, չնայելով իւր ստրկական վիճակին և դաւաւոր տանջանքներին, պահանջել է իւր ազգութիւնը, ինքնուրոյնութիւնն ու անհատական տիպը, իւր ազգային աւանդները, պահպանել է իւր վերածնութեան յոյսը: Այդ զգացումների մէջ է նա զօրացած իւր հաւատով, և իւր փորձութիւնների մէջ ցոյց տուած անյողդողդ հաստատամտութեամբ. դա միաժամանակ և մի ապացոյց է, որ պատկանում է արեւմտեան քաղաքակրթութեան ուղղութեան և որ Դաշնակիցների գործին հողւով նուիրուած է»:

Ապա յօդուածի հեղինակն արծարծում է այն մտքերն

ու տուեալները, ինչ որ կան պ. Դէշանէլի, Պէնլըվէի, Ա. Ֆրանսի և միւս ատենախօսների մէջ, ազացուցանելով, որ արեան այդ ահուկի ոճրի գործը թէև կատարուած է թիւրքերի ձեռքով, սակայն նախապատրաստուած, ծրագրուած և կազմակերպուած է Գերմանիայի միջոցով:

Տ. ծ. վ.

Ն. Վեհափառութեան անունով ստացուած են Զատկական տօների առթիւ բազմաթիւ շնորհաւորական և շնորհակալական գրութիւններ, մանաւանդ գաղթականութեան զետեղած վայրերից, որոնց մէջ իրենց ջերմ, որդիական, անկեղծ զգացումներն են արտայայտուած անմիջապահ կերպով ու սիրտն են բանում գաղթական Հայութեան բեկորները իրենց Հոգեւոր Տիրոջ և հանուրց Հօր առաջ, շատ անգամ անսեթեւեթ, պարզուկ ու զեղջուկ ոգով, սակայն սրտի խորքից և կատարեալ հաւատով:

Աւելորդ չենք համարում այդ բազմաթիւ գրութիւններից դնել այստեղ երկուսը, Ս. Էջմիածնի և Երեւանի գաղթականութեան կողմից, որոնցով շարեւ կարելի է մօտաւորապէս և միւսները:

Աստուածորդոյն Ս. Յարութեան սո նուիրական տօնին առթիւ համարձակութիւն ունիմք Հայաստանեայց եկեղեցւոյ Հովուապետիդ ներկայացնել մեր երախտագիտական զգացումները և շնորհաւորական խօսքերը, որոնք արտայայտութիւն են նահատակ ու վտարանդի թիւրքահայ հատուածին:

Երկրորդ Զատիկն է, որ կը տօնէ քրիստոնեայ աշխարհը Աւետարանի Բանին հակառակ արիւնի ու աւերի շնչով. Փրկչի Յարութիւնն է, և կը տօնէ Հայաստանեայց եկեղեցին բիւրաւոր զոհերով յանուն քրիստոնէութեան և քաղաքակրթութեան ազգերու սոյն գօտեմարտին մէջ: Վեհափառ Տէր, աշխարհաւեր պատերազմի առթած ահաւոր աղէտը համայն Հայութեան և մասնաւորապէս թիւրքիոյ Հայոց գլխին, արիւնոտած է Ձեր սիրտը, վրդոված Ձեր միտքը, Հայր, տեսանք յստակօրէն այն սև վիշտը և խորունկ կսկիծը Հայոց Հայրապետութեան սրտին, երբ աւելի